

### **Հարց**

**Հասարակական նշանակության գույքը ընդհանուր սեփականության իրավունքով պարկանում է մի քանի անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց: Այդ գույքի օտարման դեպքում ԱԱՀ-ի շեմը կիրառելի՞ է, արդյոք, բոլոր համասեփականատերերի նկատմամբ:**

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկից ավելի անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ընդհանուր սեփականությունը հանդիսացող հասարակական նշանակության գույքի օտարման դեպքում ԱԱՀ-ի շեմը կիրառվում է մեկ անգամ՝ անկախ պայմանագրով գույք օտարող կողմում հանդես եկող անձանց թվաքանակից և այդ գույքի նկատմամբ սեփականություն ունեցողների թվաքանակից:

### **Հարց**

**Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից անձնական օգտագործման ավտոմեքենայի օտարումը ենթակա է, արդյոք, ԱԱՀ-ով հարկման:**

### **Պատասխան**

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից անձնական օգտագործման ավտոմեքենայի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման գործարքը ենթակա է հարկման ԱԱՀ-ով, եթե երկրորդ և ավելի թվով անգամ օտարվող ավտոմեքենան ձեռք է բերվել օտարման պահին նախորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում: Ընդ որում՝ տվյալ դեպքում ԱԱՀ-ի շեմ չի կիրառվում:

### **Հարց**

**Գույքի հավատարմագրային կառավարման արդյունքում հավատարմագրային կառավարչի կողմից իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ինչպե՞ս է որոշվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը:**

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 40<sup>1</sup>-ին հոդվածի համաձայն՝ գույքի հավատարմագրային կառավարման արդյունքում հավատարմագրային կառավարչի կողմից իրականացված՝ ԱԱՀ-ով հարկվող գործարքների մասով ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում այդ գործարքների համար «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան որոշվող ընդհանուր շրջանառությունը: Այդ գործարքների գծով ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը, իր և կառավարման հիմնադրի փոխարեն, կրում է գույքի հավատարմագրային կառավարիչը: Հավատարմագրային կառավարման արդյունքում իրականացված գործարքների մասով բյուջե վճարման ենթակա է այդ գործարքների հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարի և հավատարմագրային կառավարման հանձնված գույքի կազմում ներառվող՝ այդ գործարքների իրականացման նպատակով ձեռքբերված

(ներմուծված) ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված՝ սույն օրենքին համապատասխան հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարների տարբերությունը:

### **Հարց**

**Ավելացված արժեքի հարկով հարկման առումով փոխադրամիջոցների վարձակալության դեպքում ո՞րն է ծառայության մատուցման վայրը:**

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ փոխադրամիջոցների վարձակալության դեպքում ծառայության մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ վարձատուն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, կամ դրա բացակայության դեպքում՝ նրա իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը:

### **Հարց**

**Կազմակերպության կողմից այլ կազմակերպության հետ կնքված պայմանագրի որոշ դրույթների չկատարմամբ առաջադրված տույժերը ենթակա՞ են, արդյոք, նվազեցման համախառն եկամտից:**

### **Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ կազմակերպության կողմից քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու (տնտեսական պայմանագրերի պայմանները խախտելու) համար առաջադրված տույժերը, տուգանքները և գույքային այլ սանկցիաները հարկվող շահույթը որոշելիս ենթակա են համախառն եկամտից նվազեցման:

### **Հարց**

**Հաշվետու տարում եկամուտ չստանալու դեպքում նվազեցվու՞մ են, արդյոք, վարչական և ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը:**

### **Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ հարկատուի գործունեության հետ կապված վարչական և ֆինանսական ծախսերի գծով նվազեցումները կատարվում են նաև համախառն եկամտի բացակայության դեպքում:

### **Հարց**

**Առևտրի հարկ վճարողը կարո՞ղ է, արդյոք, իր կողմից մատակարարվող ապրանքների դիմաց գնորդի պահանջով դուրս գրել հարկային հաշիվներ:**

### **Պատասխան**

«Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի հարկ վճարողներն իրենց կողմից մատակարարվող ապրանքների դիմաց կարող են հարկային հաշիվ դուրս գրել, եթե դրանց համար «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքով

սահմանված կարգով մատակարարների կողմից ներկայացված են հարկային հաշիվներ (ներմուծման դեպքում՝ ներմուծման հայտարարագրեր): Ընդ որում, առևտրի հարկ վճարողների կողմից դուրս գրվող հարկային հաշիվներում նշված ավելացված արժեքի հարկի գումարը չի կարող գերազանցել մատակարարների կողմից ներկայացված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում՝ ներմուծման հայտարարագրերում) առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարը:

Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի (ամսվա) սկզբին տվյալ տեսակի ապրանքային մնացորդի բացակայության դեպքում կուտակված ավելացված արժեքի հարկի գումարները հանվում են հաշվառումից, և հարկ վճարողին իրավունք չի վերապահվում դրանց չափով դուրս գրել հարկային հաշիվներ՝ հետագա հաշվետու ժամանակաշրջանում ձեռքբերված նույն տեսակի ապրանքներ մատակարարելիս: